

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴՐ. ՄԱՐՏԻՆ ՆԻՊԱԳԵ

ԽՈՍՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԸՆՏՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ.  
ԳԵՐՄԱՆԱՑԻ ԱՎԱԳ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԿԻԱՅԻՑ

---

DR. MARTIN NIEPAGE

EIN WORT AN DIE BERUFENEN VERTRETER DES  
DEUTSCHEN VOLKES  
EINDRÜCKE EINES DEUTSCHEN OBERLEHRERS  
AUS DER TÜRKEI

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Ն 739

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի  
գիտական խորհուրդը*

Հալեպի գերմանական ռեալական դպրոցի ավագ ուսուցիչ դր.  
Մարտին Նիպագեի շարադրած սույն տեղեկագիրը Հայոց  
ցեղասպանության կարևորագույն վավերագրերից է, որն  
առաջին անգամ է լույս տեսնում հայերեն լեզվով

Գերմաներենից թարգմանեց՝ Էվելինա Մակարյանը  
Խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Աշոտ Հայրունի

Դր. Մարտին Նիպագե  
Ն 739 Խոսք՝ ուղղված գերմանացի ժողովրդի ընտրյալ ներկա-  
յացուցիչներին. գերմանացի ավագ ուսուցչի տպավորու-  
թյունները Թուրքիայից/ Դր. Մարտին Նիպագե: -Եր., ԵՊՀ  
հրատ., 2017, 50 էջ + 1 էջ ներդիր:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2206-3

© ԵՊՀ հրատ., 2017



## ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն զեկուցագիրը Հայոց ցեղասպանության կարևորագույն վավերագրերից է, որն առաջին անգամ է հայերեն լույս ընծայվում: Զեկույցի հեղինակը՝ դր. Մարտին Նիպագեն, գերմանական կառավարության հանձնարարությամբ մեկնել էր Հալեպ և դասավանդում էր տեղի գերմանական ռեալական դպրոցում, երբ սկսվեց հայերի զանգվածային տեղահանությունը: Չկարողանալով հանդուրժել Հալեպ հասած աքսորյալ հայերի տառապալից, սարսափելի դրությունը՝ ականատեսն էր նա քաղաքի փողոցներում, Նիպագեն թողեց իր աշխատանքը և վերադարձավ Գերմանիա, որտեղ փորձում էր ծանոթներին իրազեկել իր կրած ծանր ապրումների և հայերին պատուհասած աղետի մասին, սակայն, հակառակ իր բոլոր ջանքերին, միայն քչերի մոտ ըմբռնում գտավ:

Ինչ-որ մեկը նրան խորհուրդ տվեց հանդիպել Յոհաննես Լեփսիուսին: 1916 թ. ամռանը կայացավ նրանց հանդիպումը, և Լեփսիուսի առաջարկությամբ Նիպագեն պատրաստեց սույն զեկուցագիրը, որն այնուհետև Պոտսդամից գաղտնի ուղարկվեց Ռայխսթագի պատգամավորներին: Չնայած զեկուցագիրը չհա-

սավ իր հասցեատերերին, քանի որ դրա տարածումն արգելվեց գրաքննության կողմից, այնուհանդերձ այն Լեփսիուսի աջակցությամբ 1916 թ. 1000 տպաքանակով հրատարակվեց և, գաղտնաբար առաքվելով հասարակայնությանն ու քաղաքական գործիչներին, կարճ ժամկետում հայտնի դարձավ՝ առաջ բերելով հուզումներ: Ավելին, 1916 թ. աշնանը այն արդեն հայտնի էր դարձել նաև Թուրքիայում, որտեղ կառավարությունը Նիպագեին հեռակա կարգով մահվան դատապարտեց: Պրուսական իշխանությունների հետապնդումներից և թուրքական գործակալների հնարավոր ահաբեկչություններից համեմատաբար ապահով լինելու համար նա այդուհետև հարկադրաբար փոխեց բնակության վայրը, տեղափոխվեց Մեքլենբուրգի երկրամաս՝ առժամանակ վարելով քիչ թե շատ մեկուսի կյանք:

Հատկանշական է, որ 1916 թ. հուլիսին, երբ Լեփսիուսը 20.500 տպաքանակով հրատարակեց և այնուհետև գերմանական լայն հասարակական շրջաններին ու հեղինակավոր լրատվամիջոցներին գաղտնի առաքեց իր «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» գիրքը<sup>1</sup>, նրան առաքման գործում իր երեխաներից գատ օգնում էին երկու անձինք՝ Մարտին Նիպագեն և Ռիխարդ Շեֆերը:

---

<sup>1</sup> Johannes Lepsius, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.

Նիպագեն հետագայում ևս իր մասնակցությունը բերեց Լեփսիոսի հայանպաստ նախաձեռնություններին: Նա, մասնավորապես, այն հայտնի կոչի համահեղինակներից էր, որը Լեփսիոսի նախաձեռնությամբ 1922 թ. ուղարկվեց Լոզանում գումարված կոնֆերանսին, և որտեղ պահանջվում էր Հայկական հարցին պատշաճ լուծում տալ:

*ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ*

*Խոսք՝ ուղղված գերմանացի ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչներին.*

*Գերմանացի ավագ ուսուցչի տպավորությունները Թուրքիայից*

Դր. Մարտին Նիպագե  
(Հալեպի գերմանական ռեալական դպրոցի  
ավագ ուսուցիչ՝ Վերնիգերոդե քաղաքից)

Երբ ես 1915 թ. սեպտեմբերին դպրոցական եռամսյա արձակուրդից հետո Բեյրութից վերադարձա Հալեպ, սարսափով լսեցի, որ սկսվել է հայերի կոտորածների մի նոր փուլ, որոնք շատ ավելի սոսկալի էին, քան նախկինում տեղի ունեցած Աբդուլ Համիդի ջարդերը, նպատակ էին հետապնդում արմատախիլ անել կիրթ, աշխատասեր և առաջադեմ հայ ժողովրդին, իսկ նրանց ունեցվածքը տալ թուրքերին:

Նման հրեշավոր լուրը ստանալով՝ նախ չհավատացի: Ինձ ասում էին, որ Հալեպի տարբեր կացարաններում գտնվում են սովահար մարդկանց զանգվածներ, որոնք, այսպես կոչված, «փոխադրվող աքսորյալների» մնացորդներ էին: Հայ ժողովրդի

բնաջնջմանը քաղաքական շղարշ տալու համար ներկայացվում էին ռազմական դրդապատճառներ, որոնք իբր թե անհրաժեշտ էին դարձնում հայերին իրենց հայրենի բնակավայրերից, որտեղ նրանք ապրում են 2500 տարուց ի վեր, տեղահանել և աքսորել արաբական անապատներ: Նաև ասում էին, որ որոշ հայեր կատարել են լրտեսական գործողություններ:

Երբ ես իրազեկվել էի փաստերի մասին և բոլոր կողմերից տեղեկություններ էի հավաքել, հանգեցի այն համոզման, որ հայերի դեմ ի հայտ եկող բոլոր մեղադրանքների պարագայում հարցը վերաբերում էր միայն չնչին շարժառիթների, որոնք օգտագործվում էին որպես պատրվակ՝ մի մեղավորի դիմաց տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց սպանելու, կանանց և երեխաների հետ ամենավայրագ կերպով վարվելու և աքսորյալներին սովահարության մատնելու համար, ինչի նպատակը մի ամբողջ ազգի բնաջնջումն է:

Իմ ունեցած տեղեկություններից բխող կարծիքը վերստուգելու համար ես այցելեցի քաղաքի այն բոլոր վայրերը, որտեղ գտնվում էին քար երթերից հետո մնացած հայերը: Ավերակված քարվանսարաններում (խաններում) ես գտա մեռած ու կիսով չափ նեխած մարդկանց կույտեր և նրանց մեջ դեռ կենդանի մնացածներ, որոնք շուտով պետք է իրենց վերջին շունչը փչեին: Այլ բակերում ես գտա հիվանդների և սովյալների բազմություններ, որոնց համար ոչ ոք հոգ չէր տանում: Գերմանական ռեալական



դպրոցի (որտեղ եւ աշխատում եմ որպէս ավագ ուսուցիչ) շրջակայքում կային չորս այդպիսի խաներ՝ յոթից ութ հարյուր քառորյակներով, որոնք սովամահ էին լինում: Մենք՝ ուսուցիչներս, և մեր աշակերտները ստիպված էինք ամեն օր անցնել դրանց մոտով: Յուրաքանչյուր ելքի մոտ բաց պատուհաններից տեսնում էինք այդ խղճալի, ցնցոտիներով պատված ուժասպառ կերպարանքները: Մեր դպրոցական երեխաները ստիպված էին լինում առավոտները նեղ փողոցում մի կերպ շրջանցել եզներին լծած երկանիվ սայլերը, որոնց վրա ամեն օր ութից տասը փայտացած դիակներ էին տեղափոխվում՝ առանց դագաղի և ծածկոցի, ձեռքերն ու ոտքերը սայլերից կախված:

Այդ ամենը մի քանի օր դիտելուց հետո եւ իմ պարտքը համարեցի շարադրել հետևյալ զեկույցը.

Որպէս Հալեպում գերմանական ռեալական դպրոցի ուսուցիչներ՝ մենք մեզ թույլ ենք տալիս խոնարհաբար տեղեկացնել հետևյալը.

Մեր պարտքն ենք համարում ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ այսուհետ դպրոցում մեր աշխատանքը կկորցնի իր բարոյական հիմքերն ու հարգանքը տեղացիների շրջանում, եթէ գերմանական կառավարությունն ի վիճակի չլինի արգելելու այն վայրագությունները, որոնք այստեղ իրականացվում են սպանված հայերի կանանց ու երեխաների նկատմամբ: Այն շարասյուններից, որոնցում, երբ նրանք հայկական լեռնաշխար-

հում իրենց հայրենիքը թողնում էին, հաշվվում էր շուրջ երկուսից երեք հազար տղամարդ, կին և երեխա, այստեղ՝ հարավ են հասնում միայն երեքից երկու հարյուրը: Տղամարդիկ ճանապարհին սպանվել են, կանայք և աղջիկները, բացառությամբ ծերերի, սգեղների և շատ փոքրերի, թուրք զինվորների և սպաների կողմից օգտագործվելուց հետո տարվել են քրդական և թուրքական գյուղերը, որտեղ նրանք հարկադրված են իսլամ ընդունել: Քարավանների մնացորդներին փորձում են ոչնչացնել սովի և ծարավի միջոցով: Մինչև իսկ գետանցումների ժամանակ ծարավից պապակածներին չեն թողնում խմել: Որպես սնունդ՝ նրանց ափի մեջ իբրև օրաբաժին լցնում են մի քիչ այլուր, որը նրանք անհագ կերպով խփշտում են, և որը միայն սովամահությունը փոքր-ինչ հետաձգելու նշանակությունն է ունենում:

Հալեպի ռեալական դպրոցի, որտեղ մենք՝ ուսուցիչներս, դասավանդում ենք, դիմացը գտնվող խաներից մեկում, որպես նման փոխադրումների մնացորդ, գտնվում է շուրջ չորս հարյուր հյուծված կերպարանքներից բաղկացած մի բազմություն, այդ թվում՝ հինգից յոթ տարեկան մոտ հարյուր երեխա (տղաներ ու աղջիկներ): Մեծ մասը՝ հիվանդ տիֆով և դիզենտերիայով: Երբ բակ ես մտնում, ստեղծվում է այնպիսի տպավորություն՝ կարծես գժանոց ես եկել: Կերակուր տալիս նկատում ես, որ նրանք ուտելը մոռացել են: Ամիսներ շարունակվող սովահարությունից տկարացած ստամոքսն այլևս ի վիճակի չէ կերակուր ընդու-

նելու: Երբ հաց ես տալիս, այն անտարբեր մի կողմ են դնում: Նրանք այնտեղ հանգիստ պառկած են և սպասում են մահին:

Ինչպե՞ս կարող ենք մենք՝ ուսուցիչներս, այնտեղ երեխաների հետ կարդալ գերմանական հեքիաթներ կամ թեկուզ գթասիրտ Սամարացու մասին պատմությունը Աստվածաշնչից: Ինչպե՞ս կարող ենք մենք անտարբեր կերպով բառեր հոլովել և խոնարհել, երբ գերմանական ռեալական դպրոցի հարևան բակերում ամենուրեք մեր հայ աշակերտների սովահար հայրենակիցները դանդաղ մահվան բաժին են դառնում: Չե՞ որ այնտեղ մեր դպրոցական աշխատանքը կհակասի ցանկացած ճշմարիտ բարոյականության և կդառնա մարդկային զգացումների ծաղր:

Իսկ այն դժբախտները, որոնց հազարներով քշել են քաղաքի միջով ու մերձակայքով դեպի անապատ՝ գրեթե միայն կանայք և երեխաներ, ի՞նչ է կատարվում նրանց հետ: Նրանք շարունակում են քշվել տեղից տեղ, մինչև հազարներից հարյուրները, մինչև հարյուրներից փոքրիկ խմբեր մնացած կլինեն: Եվ այդ փոքրիկ խմբերին նույնպես կշարունակեն քշել, մինչև այդ վերջինները նույնպես մեռած կլինեն: Միայն այդ ժամանակ է, որ թափառումի նպատակը, այդ ժամանակ է, որ «հայերին հատկացված նոր բնակավայրերը», ինչպես արտահայտվում են թերթերը, իրողություն դարձած կլինեն:

«Ta'alim el aleman» – «սա գերմանացիների մտահղացումն է»,– վստահեցնում է սովորական թուրքը նրան ով նրան հարց-

նում է այդ միջոցառումների հեղինակների մասին: Կրթված մուսուլմաններն այն համոզմանն են, որ, եթե նույնիսկ գերմանացի ժողովուրդը հավանություն չի տալիս նման ոճրագործություններին, Գերմանիայի կառավարությունը, հարգելով իր թուրք դաշնակցին, չի միջամտում դրանք արգելելու համար:

Ավելի նրբազգաց մուսուլմանները նույնպես թուրքերը, ինչպես արաբները, դժգոհությամբ թափահարում են գլուխները, մինչև իսկ չեն թաքցնում իրենց արցունքները՝ տեսնելով, թե ինչպես են թուրք զինվորները քաղաքով աքսորյալների շարասյան անցնելու ժամանակ մտրակում հղի կանանց կամ մահամերձներին, որոնք այլևս չեն կարողանում առաջ շարժվել: Նրանք չեն կարողանում հավատալ, որ իրենց կառավարության կարգադրությամբ են կատարվում այդ վայրագությունները և բոլոր սանձարձակությունների համար մեղադրում են գերմանացիներին, որոնց պատերազմի ժամանակ ամեն բանում համարում են Թուրքիայի վարպետ-ուսուցիչները: Մուլլաները ևս մզկիթներում ասում են՝ ոչ թե Բարձր Դուռը, այլ գերմանացի սպաներն են կարգադրել հայերի խոշտանգումն ու բնաջնջումը:

Այն ամենը, որ այստեղ ամիսներ ի վեր յուրաքանչյուրի աչքի առաջ կատարվում է, արևելյան ժողովուրդների հիշողության մեջ հիրավի կմնա որպես անարգանքի բիծ Գերմանիայի պատվո վահանի վրա:

Որոշ ուսյալներ, որպեսզի ստիպված չլինեն սխալվել գերմանացիների նկարագրի հարցում, որոնց հանդեպ մինչ այդ հարգանք են տածել, իրողությունը հետևյալ կերպ են բացատրում. գերմանացի ժողովուրդը, ասում են նրանք, հավանաբար ոչինչ չգիտի սարսափելի կոտորածների մասին, որոնք ներկայումս Թուրքիայում ամենուր կազմակերպվում են տեղացի քրիստոնյաներին բնաջնջելու համար: Այլապես գերմանացի ժողովրդի ճշմարտաստիության պարագայում ինչպե՞ս կարող է հնարավոր լինել այնպիսի հողվածների երևան գալը, որոնք մենք կարդում ենք գերմանական թերթերում, և որոնց հեղինակները կարծես ուրիշ ոչնչից տեղյակ չեն, բացի նրանից, որ առանձին հայեր, որպես լրտեսներ կամ պետական դավաճաններ, արժանվոյն կերպով գնդակահարվել են ռազմադաշտային դատարանի վճռով:

Ուրիշները դարձյալ ասում են. «Հավանաբար Գերմանիայի կառավարության ձեռքերը կապված են որոշ իրավասու պայմանագրերով, կամ ներկա դրությամբ միջամտությունը տեղին չէ»: Մեզ հայտնի է, որ Կոստանդնուպոլսում դեսպանությունն իր հյուպատոսությունների միջոցով իրազեկվում էր այդ ամենի մասին: Քանի որ, սակայն, մինչ այժմ աքսորի գործընթացում նվազագույն իսկ փոփոխություն չի հայտ չի եկել, մենք խղճի մտքով մեզ պարտավորված ենք համարում այս գեկույցի հարցում:

Այն ժամանակ, երբ ես շարադրում էի այս զեկույցը, Հալեպում Գերմանիայի հյուպատոսին փոխարինում էր Ալեքսանդրետի իր գործընկերը՝ հյուպատոս Հոֆմանը: Հյուպատոս Հոֆմանն ինձ տեղեկացրեց, որ Գերմանիայի դեսպանությունն Ալեքսանդրետի, Հալեպի և Մոսուլի հյուպատոսություններից շարունակ ստացվող զեկուցագրերի միջոցով մանրամասնորեն տեղեկացված է երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին, սակայն այդ զեկուցագրերի ամբողջացման և մանրամասների շարադրման տեսանկյունից ցանկալի կլինե՞ր ունենալ նաև մի զեկույց այն մասին, ինչ ես տեսել եմ սեփական աչքերով: Նա ասաց նաև, որ իմ զեկուցագիրն ապահով ճանապարհով կուղարկի Կոստանդնուպոլիս՝ դեսպանությամբ:

Ես ահա պատրաստեցի մի զեկույց այն ձևով, ինչպես այն ցանկալի էր համարվում՝ տալով մեր դպրոցի դիմաց գտնվող խանում տիրող պայմանների ճշգրիտ նկարագրությունը: Պարոն հյուպատոս Հոֆմանը ցանկացավ կցել մի քանի լուսանկարներ, որոնք ինքն անձամբ էր պատրաստել: Դրանք պատկերում էին դիակների կույտեր, որոնց արանքում այս ու այն կողմ էին սողում կամ իրենց բնական կարիքն էին հոգում դեռևս կենդանի մնացած երեխաներ:

Զեկույցի վերամշակված տեսքստը, ինձնից բացի, ստորագրվեց նաև իմ գործընկերներ ավագ ուսուցիչ պարոն դր. Գրեթերի և տիկին Մարիա Շփիքերի կողմից: Մեր հաստատության

ղեկավար պարոն տնօրեն Հուբերը նույնպես իր անունը դրեց գեկույցի տակ և ավելացրեց մոտավորապես հետևյալ բառերը. «Մեր պաշտոնակից պարոն Նիպագեի գեկույցը ոչ մի առումով չափազանցված չէ: Մենք այստեղ շաբաթներ ի վեր միայն հիվանդությամբ և դիակների գարշահոտությամբ լեցուն օդ ենք շնչում: Միայն շուտափույթ օգնության հույսն է մեզ հնարավոր դարձնում շարունակել աշխատանքը»:

Օգնություն չհասավ: Այդ ժամանակ իմ մտածումն էր՝ թողնել գերմանական ռեալական դպրոցում ավագ ուսուցչի պաշտոնը՝ այն հիմնավորումով, որ անիմաստ է և բարոյապես չի կարող արդարացվել, որպես եվրոպական մշակույթի ներկայացուցիչ, մի ժողովրդի դասավանդելն ու դաստիարակելը և միաժամանակ հարկադրաբար անտարբեր դիտելը, թե ինչպես է երկրի կառավարությունն աշակերտների հայրենակիցներին մատնում տանջալի սովամահության: Իմ շրջապատը, սակայն, և նաև հիմնարկության ղեկավար պարոն տնօրեն Հուբերը ինձ ետ պահեցին իմ մտադրությունից: Նրանք իմ ուշադրությունը հրավիրեցին այն հանգամանքի վրա, որ ճիշտ կլիներ, որ մենք, որպես եղելությունների ականատեսներ, մնայինք երկրում: Գուցե մեր ներկայությունը նպաստեր, որ թուրքերը, նկատի առնելով մեզ՝ գերմանացիներին, փոքր-ինչ մարդկայնորեն վարվեին իրենց դժբախտ զոհերի հետ: Ես այժմ տեսնում եմ, որ չափազանց երկար եմ եղել այդ բոլոր անիրավությունների լուռ վկան:

Մեր ներկայությունը ոչինչ չբարելավեց, իսկ ինչ մենք ինքներս էինք կարողանում անել՝ խիստ չնչին էր: Տիկին Շփիքերը՝ մեր եռանդուն, խիզախ պաշտոնակցուհին, օճառ էր գնում և մեր շրջապատում այն կանանց ու երեխաներին (տղամարդիկ այլևս չկային), որոնք դեռ կենդանի էին, օճառով լողացնում էր և ոջիլներից մաքրում: Տիկին Շփիքերը հավաքեց կանանց, որոնք ապուր էին եփում նրանց համար, որոնք դեռ կարող էին սնունդ ընդունել: Ես անձամբ վեց շաբաթ շարունակ ամեն երեկո մահավերձ երեխաներին երկու դույլ թեյ, պանիր և փափկեցված հաց էի բաժանում: Երբ, սակայն, մահվան տներից սովը կամ բժավոր տիֆը տարածվեց քաղաքում, մենք՝ հինգ պաշտոնակիցներս, հիվանդացանք և հարկադրված էինք դադարեցնել մեր օգնությունը: Աքսորյալների համար, որոնք այստեղ՝ Հալեպ էին գալիս, նաև անօգուտ էր ամեն կարգի օգնությունը: Մենք կարողանում էինք միայն մի փոքր թեթևացնել հոգեվարքում գտնվող՝ մահվան դատապարտվածների տառապանքը:

Այն, ինչ Հալեպում մեր սեփական աչքերով տեսանք, հայերի բնաջնջման մեծ ողբերգության սուկ վերջին տեսարանն էր՝ միայն չնչին բեկոր այն սոսկալիի, որ միաժամանակ տեղի էր ունենում Թուրքիայի բոլոր նահանգներում: Շատ ավելի զարհուրելի լուրեր էին հաղորդում Բաղդադի երկաթուղու ճարտարագետները, երբ ուղեմասից տուն էին վերադառնում, կամ գերմանացի ճանապարհորդները, որոնք իրենց ճանապարհին հանդի-



պել էին աքսորյալների քարավաններին: Այդ պարոններից ոմանք այնպիսի սարսափելի բաներ էին տեսել, որ օրերով ոչինչ չէին կարողանում ուտել:

Նրանցից մեկը (պարոն Գրայֆը՝ Հալեպից) պատմում էր, թե ինչպես Թել Աբիադի և Ռաս ուլ Այնի մոտ երկաթուղու թմբի վրա զանգվածաբար փոված էին մերկ կանանց պղծված դիակներ: Նրանցից շատերի հետույքների մեջ մահակներ էին խրված: Մեկ ուրիշը (պարոն Շփիքերը՝ Հալեպից) տեսել էր, թե ինչպես էին թուրքերը հայ տղամարդկանց կապում միմյանց, որսորդական հրացաններով մի քանի անգամ կրակում էին կապկպած մարդկանց վրա և ծիծաղելով հեռանում, մինչդեռ նրանց գոհերը սարսափելի ցնցումների մեջ դանդաղ մեռնում էին: Այլ տղամարդկանց ձեռքերը կապել էին մեջքերին և ցած էին նետում գառիվայրից: Ներքևում կանգնած էին կանայք, որոնք դանակներով մշակում էին ցած նետվածներին, մինչև նրանք կմեռնեին: Քաշում էին մի բողոքական հոգևորականի մատների եղունգները, որը դեռ երկու տարի առաջ շատ սրտալից հյուրընկալություն էր ցուցաբերել իմ պաշտոնակից դր. Գրեթերին ճամփորդության ժամանակ:

Մոսուլի գերմանացի հյուպատոսը Հալեպի գերմանական ակումբում իմ ներկայությամբ պատմում էր, որ ինքը Մոսուլից Հալեպ տանող ճանապարհի որոշ հատվածներում երեխաների՝ այնքան շատ կտրված ձեռքեր է թափված տեսել, որ դրանցով

կարելի կլինեն ծածկել ողջ փողոցը: Ուրֆայի գերմանական հիվանդանոցում պառկած է մի փոքրիկ աղջիկ, որի գույգ ձեռքերը նույնպես կտրված են: Հալեպի շրջանի արաբական մի գյուղի մոտ պարոն Հոլշթայնը՝ Մոսուլի գերմանական հյուպատոսը, տեսել է մակերեսորեն թաղված հայերի թարմ դիակներ: Գյուղի արաբներն ասում էին, որ իրենք հայերին սպանել են կառավարության հրամանով: Նրանցից մեկը հպարտ վստահեցնում էր, որ ինքն անձամբ ութ հոգու է սպանել:

Հալեպի շատ տներում, որտեղ քրիստոնյաներ էին ապրում, ես գտա թաքցված հայ աղջիկների, որոնք ինչ-որ դիպվածով խուսափել էին մահից. կա՛մ ուժասպառ պառկած էին մնացել և մեռած էին համարվել, երբ նրանց շարասյունը շարունակում էր քշվել, կա՛մ եվրոպացիները կարողացել էին այդ դժբախտներին մի քանի մարկով գնել այն թուրք զինվորից, որը վերջինն էր նրանց բռնաբարել: Այդ բոլոր աղջիկները կարծես հոգեպես խանգարված են: Շատերը ստիպված են եղել ականատես դառնալ, թե ինչպես էին թուրքերը կտրում իրենց ծնողների գլուխները: Ես գիտեմ այնպիսի թշվառ արարածների, որոնք ամիսներ շարունակ ոչ մի խոսք չեն արտաբերել, որոնցից դեռ այսօր էլ հնարավոր չէ ինչ-որ ժպիտ կորզել: Հալեպում Բաղդադի երկաթուղու պահեստապետ պարոն Քրաուզեն իր մոտ էր վերցրել մոտ 14 տարեկան մի աղջկա: Թուրք զինվորները երեխային մի գիշերվա ընթացքում այնքան էին բռնաբարել, որ նա լրիվ կորց-

րել էր բանականությունը: Ես տեսա, թե ինչպես էր նա այրվող շուրթերով խելացնոր թավալվում իր բարձի վրա, և միայն դժվարությամբ կարողացա նրան ջուր խմեցնել:

Ինձ ծանոթ մի գերմանացի Ուրֆայի մոտակայքում տեսել էր, թե ինչպես էին թուրք զինվորները ստիպում հարյուրավոր քրիստոնյա գեղջուկ կանանց մերկանալ: Զինվորները զվարճանում էին՝ նրանց օրեր շարունակ 40 աստիճան շոգի պայմաններում անապատով մերկ քշելով, մինչև նրանց մաշկը լրիվ կայրվեր: Մեկ ուրիշը տեսել էր, թե ինչպես մի թուրք հայ կնոջ արգանդից դուրս էր քաշել երեխային և ծեփել պատին:

Ալեքսանդրետի, Հալեպի և Մոսուլի գերմանական հյուպատոսությունների՝ դեսպանությանը ներկայացրած բազմաթիվ գեկուցագրերում առկա են այլ փաստեր և ավելի զարհուրելի, քան իմ կողմից ներկայացված այս փոքրաթիվ օրինակները: Հյուպատոսներն այն կարծիքին են, որ մինչև այժմ հավանաբար շուրջ մեկ միլիոն հայեր զոհ են դարձել վերջին ամիսների կոտորածներին:

Խղճի պարտք է խոսել այդ ամենի մասին: Թեև կառավարությունը հայ ժողովրդի բնաջնջմամբ միայն քաղաքական նպատակներ է հետապնդում, այնուամենայնիվ դրա իրականացումը շատ զճերով կրում է քրիստոնյաների հալածանքների բնույթ:

Տասնյակ հազարավոր աղջիկներն ու կանայք, որոնց քարշ էին տալիս թուրքական հարեմները, երեխաների զանգվածները,

որոնց կառավարությունը հավաքում և բաժանում է թուրքերին ու քրդերին, կորած են քրիստոնյա եկեղեցու համար և հարկադրված են ընդունել իսլամը: Գերմանացիները նույնպես այժմ կրկին լսում են վիրավորական «ցավուր» բառը:

Ադանայում ես տեսա հայ որբերի մի բազմություն՝ թուրք զինվորների հսկողությամբ փողոցով գնալիս: Նրանց ծնողներին սպանել էին, երեխաները պարտավոր են մուսուլմաններ դառնալ: Ամենուր այնպիսի դեպքեր են ի հայտ եկել, երբ չափահաս հայերն իրենց կյանքը կարողացել են փրկել՝ իսլամն ընդունելու պատրաստակամություն հայտնելով:

Այլ վայրերում այն բանից հետո, երբ քրիստոնյաներին դրդել էին դիմում գրել իսլամական համայնք ընդունվելու համար, թուրք պաշտոնյաները եվրոպացիների աչքերին թոզ փչելու համար վեհանձնաբար պատասխանում էին՝ կրոնը խաղալիք չէ, և նախընտրում էին խնդրատուներին սպանել տալ: Այնպիսի մարդիկ, ինչպես Թալեաթ բեյն ու Էնվեր փաշան, շատ անգամներ երևելի հայերին, որոնք նրանց նվերներ էին բերում, շնորհակալության հետ մեկտեղ նաև հայտնում էին, որ իրենց համար ավելի հաճելի կլինեք, եթե հայ նվիրատուներն իրենց նվերները հանձնեին որպես մուսուլմաններ: Այդ պարոններից մեկը թերթի մի լրագրողի ասել է. «Անկասկած, մենք այժմ պատժում ենք նաև շատ անմեղների»: Նման պատճառաբանություններով թուրք պետական գործիչներն արդարացնում են անպաշտպան

կանանց և երեխաների զանգվածային կոտորածները: Գերմանացի մի կաթոլիկ հոգևորական տեղեկացրեց, որ Էնվեր փաշան Կոստանդնուպոլսում պապի դեսպանորդ մոնսինյոր Դուչիի ներկայությամբ ասել էր, որ ինքը չի հանգստանա այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի մնացած կլինի գեթ մեկ հայ:

Աքսորի նպատակը ողջ հայ ժողովրդի բնաջնջումն է: Այդ դիտավորությունը վկայում է այն, որ թուրքական կառավարությունը մերժում կամ պարբերաբար փորձում է խոչընդոտել առաքելությունների և երկրում բնակվող գթության քույրերի ու եվրոպացիների յուրաքանչյուր օգնություն: Մի շվեյցարացի ճարտարագետ պետք է կանգնե՞ր ռազմական դատարանի առջև, քանի որ նա Անատոլիայում հաց էր բաժանել աքսորյալների մի շարասյան՝ սովամահության եզրին հասած հայ կանանց ու երեխաներին: Կառավարությունը չվարանեց աքսորել նաև Ադանայի և Հալեպի գերմանական դպրոցների հայ աշակերտներին ու ուսուցիչներին, նաև գերմանական որբանոցների հայ երեխաներին՝ անտարբեր մնալով հյուպատոսների և հաստատությունների ղեկավարների բոլոր ջանքերի հանդեպ: Մերժվեց նաև ամերիկյան կառավարության՝ աքսորյալներին ամերիկյան նավերով և ամերիկյան ծախսով Ամերիկա տեղափոխելու առաջարկը:

Թե ինչ են մտածում մեր գերմանացի հյուպատոսները և երկրում բնակվող բազմաթիվ օտարերկրացիները հայերի կոտորածների մասին, մի օր հայտնի կդառնա զեկուցագրերի միջո-

ցով: Թուրքիայում գերմանացի սպաների կարծիքի մասին ես ոչինչ չեմ կարող ասել: Հաճախ նկատել եմ, թե նրանց շրջաններում ինչպես էր տհաճ լռությամբ կամ ճիզի գործադրումով փոխվում թեման, երբ մի եռանդաշատ գերմանացի սեփական դատողությամբ խոսում էր հայերի սոսկալի տառապանքների մասին:

Երբ գեներալ-ֆելդմարշալ ֆոն դեր Գուլցը մեկնում էր Բադ-դադ և Ջերաբլուսի մոտ պետք է անցներ Եփրատը, այնտեղ կար սովամահության եզրին հասած աքսորյալ հայերի մի մեծ ճամբար: Ֆելդմարշալի ժամանումից քիչ առաջ, ինչպես ես տեղեկացա Ջերաբլուսում, այդ դժբախտներին՝ հիվանդ և մահամերձ մարդկանց, մտրակների հարվածների տակ քշել էին մի քանի կիլոմետր այն կողմ գտնվող բլուրների վրա: Երբ ֆոն դեր Գուլցն այդտեղով անցնում էր, այդ զազրելի տեսարանն այլևս չկար: Երբ մենք դրանից կարճ ժամանակ անց մի քանի պաշտոնակիցներով այցելեցինք այդ վայրը, գտանք այնտեղ տղամարդկանց և երեխաների դիեր, հագուստի մնացորդներ և գանգեր ու ոսկորներ, որոնց միսը բորենիներն ու գիշատիչ թռչունները դեռ միայն մասամբ էին խժռել:

Սույն զեկույցի հեղինակը բացառված է համարում, որ Գերմանիայի կառավարությանը, եթե այն լուրջ մտադրություն ունի գեթ վերջին պահին հակազդել ադետին, անհնար կլիներ Թուրքիայի կառավարությանը խելքի բերել: Իրո՞ք թուրքերը մեր

նկատմամբ այդչափ բարյացակամ են, ինչպես ասվում է, չի՞ կարելի նրանց հասկացնել, թե որքան են նրանք մեզ վարկաբեկում ամբողջ աշխարհի առաջ, եթե մենք, որպես նրանց դաշնակիցները, հանգիստ պետք է նայենք, թե ինչպես են մեր հավատակիցները Թուրքիայում հարյուր հազարներով մորթվում, ինչպես են նրանց կանայք ու դուստրերը անարգվում, իսկ երեխաները մեծանում՝ ընդունելով իսլամը: Մի՞ թե թուրքերը ըմբռնում չունեն այն բանի հանդեպ, որ իրենց բարբարոսությունները մեզ են վերագրվում, և որ մեզ՝ գերմանացիներիս, մեղադրում են պատժելի համաձայնության կամ արգահատելի թուլության մեջ, եթե մենք այս պատերազմի առաջացրած սարսափելի արհավիրքների առջև այք ենք փակում և փորձում քար լռության մատնել փաստերը, որոնք արդեն հայտնի են ողջ աշխարհում: Իրո՞ք թուրքերն այնքան ինտելիգենտ են, ինչպես ասվում է, արդյո՞ք հնարավոր չէր լինի նրանց համոզել, որ իրենք, Թուրքիայում քրիստոնյա ազգերին բնաջնջելով, ոչնչացնում են արժեքներ ստեղծող տարրերին և Եվրոպայի հետ առևտրի ու համընդհանուր քաղաքակրթության միջնորդներին: Արդյո՞ք թուրքերն այնքան հեռատես են, ինչպես դա ասվում է, կկարողանա՞ն նրանք անտարբեր մնալ այն երկյուղալի հեռանկարի հանդեպ, որ Եվրոպական մշակութային պետությունները, ի գիտություն ընդունելով այն ամենը, ինչ պատերազմի ժամանակ Թուրքիայում տեղի է ունեցել, ստիպված պետք է լինեն այն հետևությունը կատարել, որ

Թուրքիան զրկվելու է ինքն իրեն կառավարելու իրավունքից և մեկընդմիջտ կորցրել է իր մշակութային ունակությունների և հանդուրժողականության հանդեպ հավատը: Արդյո՞ք Թուրքիայի սեփական լավագույն շահը չէ, որ կներկայացնի գերմանական կառավարությունը, եթե նրան խանգարի տնտեսապես և բարոյապես անդունդը գահավիժել:

Այս գեկույցով ես փորձում եմ գերմանացի ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչների միջնորդությամբ հասնել կառավարության ականջին: Ռայխսաթագի հանձնախմբերի նիստերում նման հարցերը, որքան էլ դրանք անհաճո լինեն, չպետք է ավելի երկար լռության մատնվեն: Ոչինչ ավելի ամոթալի չէր լինի մեզ համար, քան այն, որ Կոստանդնուպոլսում չափազանց մեծ ծախսերով կառուցվեր գերմանա-թուրքական բարեկամության մի հաստատություն, այն դեպքում, երբ մենք ի վիճակի չենք մեր հավատակիցներին պաշտպանել բարբարոսություններից, որոնք իրենց նմանը չունեն Թուրքիայի՝ արյան մեջ թաթախված պատմության մեջ: Ավելի լավ չէ՞ր լինի հավաքած միջոցներն օգտագործել թուրքական բարբարոսության անմեղ զոհերի համար որբանոցներ կառուցելու նպատակով:

Երբ 1909 թ. Ադանայի կոտորածից հետո տեղի ունեցավ հաշտեցման ճաշկերույթ, որին, բացի թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից, մասնակցում էին նաև հայ հոգևորականության ղեկավարները, ինչպես տեղեկացնում էր այդտեղ ներկա



գտնված գերմանացի հյուպատոս Բյուզեն, վեր կացավ մի հայ հոգևորական և իր ճառում ասաց. «Ճիշտ է, մենք՝ հայերս, այդ ջարդերի օրերին շատ բան ենք կորցրել՝ մեր տղամարդկանց, մեր կանանց, մեր երեխաներին և մեր ունեցվածքը: Դուք՝ թուրքերդ, սակայն, ավելին եք կորցրել: Դուք կորցրել եք ձեր պատիվը»:

Եթե մենք շարունակում ենք քրիստոնյաների կոտորածները համարել Թուրքիայի ներքին գործը, ինչը մեզ համար միայն այն նշանակությունն ունի, որ Թուրքիայի հետ ամրապնդենք բարեկամությունը, ապա պետք է նաև փոխենք մեր գերմանական մշակութային քաղաքականության ուղենիշները: Այդ դեպքում մենք պետք է դադարենք Թուրքիա ուղարկել գերմանացի ուսուցիչներ, իսկ մենք՝ ուսուցիչներս, պետք է հրաժարվենք Թուրքիայում մեր աշակերտներին գերմանացի գրողների ու բանաստեղծների, գերմանական մշակույթի և գերմանական իդեալների, ուր մնաց, թե նաև գերմանական քրիստոնեության մասին պատմել:

Ես երեք տարի առաջ Արտաքին գործերի նախարարության կողմից որպես ավագ ուսուցիչ ուղարկվեցի Հալեպի գերմանական ռեալական դպրոց: Մագդեբուրգի թագավորական մարզային դպրոցի կոլեգիան ուղևորությունս շարունակելուց առաջ ինձ առանձնահատուկ պարտավորեցրեց, որ ես ինձ արժանի դրսևորեմ այն վստահությանը, որն արձակուրդի ընթացքում իմ հան-

դեպ ցուցաբերվել է՝ ավագ ուսուցչի պաշտոնը վարելու համար: Որպես գերմանացի պաշտոնյա և գերմանական մշակույթի հրավիրյալ ներկայացուցիչ՝ ես իմ պարտականություններին չէի համապատասխանի, եթե այն զազրելիությունների հանդեպ, որոնց ականատեսն էի, լռություն պահպանեի և անտարբեր դիտեի, թե ինչպես են ինձ վստահված աշակերտները քշվում անապատ՝ սովամահության:

Երիտթուրքական կառավարության կողմից հայերի դեմ կարգադրված և իրականացված այս սոսկալի միջոցառումների դրդապատճառների առնչությամբ հարկ է ասել հետևյալը:

Երիտթուրքի աչքերի առաջ սավառնում է միատարր ազգային պետության եվրոպական իդեալը: Նա հույս ունի, որ կկարողանա ոչ թուրք մուսուլման ռասաներին, ինչպես օրինակ, քրդերին, պարսիկներին, արաբներին և ուրիշներին, վարչական ճանապարհով և թուրքերենի դպրոցական ուսուցմամբ, վկայակոչելով միասնական մուսուլման շահը, թրքացնել: Նա վախենում է քրիստոնյա ազգերից՝ հայերից, ասորիներից, հույներից, նրանց մշակութային և տնտեսական գերազանցության պատճառով և, ի դեմս նրանց կրոնի, արգելք է տեսնում՝ նրանց խաղաղ ճանապարհով թրքացնելու համար: Այդ իսկ պատճառով նրանք պետք է բնաջնջվեն կամ բռնի իսլամացվեն: Թուրքերը չեն պատկերացնում, որ նրանք այդպիսով միաժամանակ կտրում են այն ճյուղը, որի վրա նստած են նաև իրենք: Ո՞վ պետք է Թուրքիան

զարգացնի, եթե ոչ հույները, հայերն ու ասորիները, որոնք կազմում են պետության բնակչության ավելի քան մեկ քառորդը: Թուրքերն իրենք, որոնք Թուրքիայում բնակվող ռասաներից ամենաանընդունակն են, բնակչության փոքրամասնություն են կազմում և մշակութապես մինչև իսկ արաբներից դեռ շատ հետ են մնում: Որտե՞ղ է, որ կա թուրքական առևտուր, թուրքական արհեստ, թուրքական արդյունաբերություն, թուրքական արվեստ, թուրքական գիտություն: Նրանք նույնիսկ իրավունքը, կրոնն ու լեզուն, որչափ որ դրանք իրենց մատչելի են, փոխ են առել հպատակեցված արաբներից:

Մենք՝ ուսուցիչներս, որ երկար տարիներ Թուրքիայում գերմանական դպրոցներում հույներին, հայերին, արաբներին, թուրքերին և հրեաներին դասավանդել ենք, չենք կարող այլ կարծիք հայտնել, քան այն, որ մեր բոլոր աշակերտներից ամենամեծ չկամությամբ սովորողներն ու ամենաանընդունակները զտարյուն թուրքերն են: Որտեղ մի թուրք հանկարծ ինչ-որ լավ բան է անում, տասից ինը դեպքերում կարելի է վստահ լինել, որ խոսքը վերաբերում է չերքեզի, ալբանացու կամ երակներում բուլղարական արյուն կրող թուրքի: Իմ անձնական փորձառությունից ելնելով՝ կարող եմ միայն այն կանխատեսումն անել, որ իսկական թուրքերը առևտրի, արդյունաբերության և գիտության ոլորտներում երբեք որևէ նպաստ չեն բերելու:

Այժմ գերմանական թերթերում պատմում են թուրքերի՝ ուսման ծարավի մասին, որոնք ոգևորված ձգտում են գերմաներեն սովորել, նույնիսկ տեղեկացնում են մեծահասակների համար նախատեսված լեզվի դասընթացների մասին, որոնք կազմակերպվում են Թուրքիայում: Անշուշտ՝ դրանք կազմակերպվում են, բայց ի՞նչ արդյունք են տալիս: Կարդում ենք մի ռեալական դպրոցի լեզվի դասընթացի մասին, որը սկսվել է տասներկու թուրք ուսուցիչների՝ իբրև աշակերտների հետ: Թղթակիցը, սակայն, մոռանում է ավելացնել, որ չորս դասաժամից հետո միայն վեց, հինգ դասաժամից հետո՝ հինգ, վեց դասաժամից հետո՝ չորս, իսկ յոթ դասաժամից հետո՝ միայն երեք աշակերտներ կայացավ պարապմունքին, այնպես որ դասընթացը աշակերտների անտարբերության պատճառով ութ դասաժամից հետո չեղարկվեց, մինչդեռ իրականում նոր էր սկսվել: Եթե աշակերտները հայեր լինեին, ապա նրանք կտոկային մինչև ուսումնական տարվա վերջը, ջանասիրաբար կսովորեին և վերջում բավականին կտիրապետեին գերմաներենին:

Ո՞րն է Գերմանիայի, ինչպես և յուրաքանչյուր քրիստոնյա մշակութային ժողովրդի պարտականությունը հայերի կոտորածների առնչությամբ: Մենք պետք է փորձենք ամեն ինչ անել՝ կես միլիոն հայ կանաց ու երեխաներին, որոնք այսօր Թուրքիայում դեռ կարող են կենդանի լինել և մատնված են սովամահության, մի բնաջնջումից պաշտպանելու համար, որը քաղաքա-

կիրթ ամբողջ աշխարհի խայտառակությունը կդառնա: Միջագետքի անապատի եզրին և այնտեղ տանող ճանապարհներին թափված հարյուր հազարավոր աքսորյալ կանանց ու երեխաներին իրենց թշվառ գոյությունը շարունակելու քիչ ժամանակ է մնացել: Կամ որքա՞ն կարելի է ապրել՝ ձիու աղբի մեջ հացահատիկ փնտրելով և դրա հետ խոտ ուտելով: Անհամար մարդկանց հազիվ թե հնարավոր լինի օգնել՝ ամիսներ շարունակվող թերսնման և տարածված դիզենտերիայի պատճառով: Կոնիայում դեռևս ապրում են Կոստանդնուպոլսից տեղահանված, նախկինում ունևոր և կրթված հայերից մի քանի հազարը՝ բժիշկներ, գրողներ, վաճառականներ, որոնց դեռ կարելի է օգնել, քանի դեռ նրանց ևս չի պատուհասել սոսկալի ճակատագիրը: Հազար հինգ հարյուր առողջ հայ տղամարդիկ, կանայք ու երեխաներ՝ նրանց թվում վաթսունամյա տատիկներ և վեցից յոթ տարեկան շատ երեխաներ դեռ աշխատում են, որպես քար կոտորողներ և հողափորներ, Բաղդադի երկաթուղու մի ուղեմասում՝ Այրանի և Էնթեղիի միջև, մեծ թունելի մոտակայքում: Ներկայումս նրանց կերակրում է Բաղդադի երկաթուղու գլխավոր ճարտարագետ Մորֆը, սակայն թուրքական կառավարությունն արդեն նաև նրանց անուններն է գրանցել: Հենց որ նրանք աշխատանքն ավարտեն, ինչը կտևի երկուսից երեք ամիս, և նրանց կարիքն այլևս չունենան, նրանց կքշեն «բնակության նոր վայրեր», այն է՝ տղամարդկանց կառանձնացնեն և կգնդակահարեն, գեղեցիկ

կանանց ու աղջիկներին կտանեն հարեմներ, իսկ մնացածին առանց սննդի, անապատում այս ու այն կողմ կքշեն, մինչև բռլորը կմեռնեն:

Հայ ժողովուրդը Գերմանիայի օգնության ակնկալիքն ունի: Երբ մի քանի տարի առաջ Կիլիկիայում ի հայտ էր եկել հայերի կոտորածների բռնկման սպառնալիք, Մերսինի դիմաց հայտնվեց գերմանական մի ռազմանավ: Հրամանատարն Ադանայում այցելեց հայ կաթողիկոսին և նրան վստահեցրեց, որ քանի դեռ Թուրքիայում առկա է գերմանացիների ազդեցությունը, ապա անհնար կլինեն կոտորածները, որպիսիք տեղի են ունեցել Աբդուլ Համիդի ժամանակ: Գերմանիայի դեսպան ֆոն Վանզեն-հայմը անցյալ տարվա ապրիլին մի ընդունելության ժամանակ նույնն է հավաստիացրել Հայոց պատրիարքին և Հայոց ազգային ժողովի նախագահին:

Եթե նույնիսկ չխոսենք քրիստոնեական համընդհանուր պարտքի մասին, մենք՝ գերմանացիներս, առանձնահատուկ պարտավորություն ենք կրում՝ դեռևս կենդանի մնացած կես միլիոն հայերի լրիվ բնաջնջումը դադարեցնելու համար: Մենք Թուրքիայի դաշնակիցն ենք և ֆրանսիացիների, անգլիացիների ու ռուսների մեկուսացման պարագայում միակն ենք, որ այնտեղ դեռ ինչ-որ բան պետք է ասենք: Մենք կարող ենք զայրույթով հերքել թշնամական արտերկրի ստերն այն մասին, թե գերմանացի հյուպատոսներն են կազմակերպել կոտորածները, թուրք

Ժողովրդի հավատն առ այն, թե Գերմանիան է կարգադրել հայերի կոտորածները, մենք չենք վերացնի, եթե գերմանացի դիվանագետների ու սպաների կողմից, վերջ ի վերջո, եռանդուն միջամտություն տեղի չունենա: Իսկ եթե հետագայում նույնիսկ մնա միայն այն մեղադրանքը, որ մեր դաշնակցի հանդեպ մեր տածած երկյուղն ու թուլությունը մեզ խանգարել են կես միլիոն կանանց ու երեխաներին պաշտպանել սպանդից և սովամահությունից, ապա Գերմանիայի մղած պատերազմի պատկերը բոլոր ժամանակներում համաշխարհային պատմության հայելու մեջ մի սզեղ դիմագծով այլանդակված կլինի: Շատ սխալված կլինենք, եթե հավատանք, որ թուրքական կառավարությունն ինքնակամ կհրաժարվի գոնե կանանց ու երեխաներին ոչնչացնելուց, եթե գերմանական կառավարության կողմից առավելագույն ճնշում չգործադրվի: Դեռևս այս տարվա մայիսին, իմ՝ Հալեպից մեկնելուց կարճ ժամանակ առաջ Բաղդադի երկաթուղու մոտ, Ռաս ուլ Այնում, մորթվեցին այնտեղ ճամբարող բոլոր քսորյալների բազմությունները՝ մոտավոր գնահատմամբ՝ քսան հազար կանայք և երեխաներ:

EIN WORT AN DIE BERUFENEN VERTRETER DES  
DEUTSCHEN VOLKES  
EINDRÜCKE EINES DEUTSCHEN OBERLEHRERS  
AUS DER TÜRKEI

*Von*

*Dr. Martin Niepage*

*Oberlehrer an der deutschen Realschule zu  
Aleppo, z. St. Wernigerode*

Als ich im September 1915 von einem dreimonatigen Ferienaufenthalt aus Beirut nach Aleppo zurückkehrte, hörte ich mit Entsetzen, dass eine neue Periode von Armeniermassakres begonnen habe, die weit fürchterlicher als die früheren unter Abdul Hamid, zum Zwecke hätten, das intelligente, erwerbsfreudige und fortgeschrittene Volk der Armenier mit Stumpf und Stiel auszurotten und dessen Besitz in türkische Hände übergehen zu lassen.

Für eine so ungeheuerliche Kunde fehlte mir zunächst der Glaube. Man sagte mir, in verschiedenen Quartieren von Aleppo lägen Massen von halbverhungerten Menschen, die von sogenannten "Deportationstransporten" übrig geblieben seien. Um der Ausrottung des armenischen Volkes ein politisches Mäntelchen umzuhängen, schütze man militärische Gründe vor, die es angeblich nötig machten, die Armenier aus ihren heimischen Wohnsitzen, die sie seit 2500 Jahren innehaben, zu



vertreiben und in die arabische Wüste zu deportieren. Auch sage man, dass sich einzelne Armenier zu Spionageakten hätten verleiten lassen.

